



Ուսուցիչ

ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N. Y. 10016 • 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Թիւ 23402
Փետրուար 24, 1972

Գերաշնորհ
Տ. Բարգէն Նպս. Վարժապետեան
Հովիւ Ս. Աստուածածին Սկեղեցւոյ
եւ Նախագահ Ժիական Խորհուրդի
Ուսուցիչներն.

Սիրելի Սրբազան,

Ստացած ենք 1972 Փետրուար 12 թուակիր 2եր տեղեկագիրը, որով կը
հաղորդէք թէ 2եր նախագահութեամբ՝ Յունուար 30ին գումարուած 2եր
Ժիական Ժողովին մէջ կատարուած է Ժիական Խորհուրդի շորս անդամոց
ընտրութիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը, կը խնդրէք
ընտրուած անձերուն վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ 2եր Ժիական Ժողովը տեղի ունեցած է թեմական
Կանոնադրութեան տրամադրութեան համաձայն, այսու կը վաւերացնենք
Ժիական Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Հաճեցէք փութով Առաջնորդարան ղրկել Ժիական Խորհուրդի նորընտիր
Դիւանի անդամոց եւ եկեղեցւոյ բնթակայ մարմիններու ատենապետներու
անունը, հասցէն եւ հեռաձայնի թիւը: Ինչպէս նաեւ Ժիական Ժողովի
ատենագրութիւնը եւ ելեւմտից հաշուեկշիռը:

Օրհնելով Ժիական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք 2եզի եւ 2եր
պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի
պայծառութիւն Ս. Սկեղեցւոյ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր
սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐԹԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Տիարք՝ Վահան Սայեամ
Ճէք Հանանեան
Ալպրթ Մանեան
Սարգիս Սաթեան